

# ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Անդամները,

*նկատի ունենալով* Առևտրի բազմակողմ բանակցությունները,

*ցանկանալով նպաստել* ՄԱԳ-Հ-1994-ի նպատակների իրականացմանը,

*հաշվի առնելով* զարգացող Անդամ երկրների՝ առևտրային, զարգացման և ֆինանսական առանձնահատուկ կարիքները,

*ընդունելով* ներմուծման ինքնաշխատ (ավտոմատ) լիցենզավորման օգտակարությունը որոշ նպատակներով և այն, որ այդ լիցենզավորումը չպետք է գործածվի առևտուրը սահմանափակելու համար,

*ընդունելով*, որ ներմուծման լիցենզավորումը կարող է գործածվել այնպիսի միջոցների իրականացման համար, ինչպիսիք ընդունվել են համաձայն ՄԱԳ-Հ-1994-ի համապատասխան դրույթների,

*ընդունելով* ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի նկատմամբ կիրառվող ՄԱԳ-Հ-1994-ի դրույթները,

*ցանկանալով ապահովել*, որ ներմուծման լիցենզավորման ընթացակարգերը չօգտագործվեն այնպիսի եղանակով, որը հակասում է ՄԱԳ-Հ-1994-ի սկզբունքներին ու պարտավորություններին,

*ընդունելով*, որ միջազգային առևտրի հոսքը կարող է խոչընդոտվել ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի անպատշաճ կիրառմամբ,

*համոզված լինելով*, որ ներմուծման լիցենզավորումը, հատկապես ոչ ինքնաշխատ ներմուծման լիցենզավորումը պետք է իրականացվի թափանցիկ ու կանխատեսելի եղանակով,

*ընդունելով*, որ ոչ ինքնաշխատ լիցենզավորման ընթացակարգերը՝ վարչարարության առումով չպետք է ավելի բարդ լինեն, քան դա անպայմանորեն անհրաժեշտ է համապատասխան միջոցների իրականացման համար,

*ցանկանալով* պարզեցնել ու թափանցիկ դարձնել միջազգային առևտրում կիրառվող վարչական ընթացակարգերն ու գործելակերպերը և ապահովել այդ ընթացակարգերի ու գործելակերպերի արդար և անաչառ կիրառությունն ու վարումը,

*ցանկանալով* խորհրդակցական գործակառույց սահմանել և ապահովել սույն Համաձայնագրի շրջանակներում ծագող վեճերի արագ, արդյունավետ և անաչառ կարգավորումը,

սույնով համաձայնեցին հետևյալի մասին.

## Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Համաձայնագրի նպատակով ներմուծման լիցենզավորումը սահմանվում է որպես վարչական ընթացակարգեր<sup>1</sup>, որոնք կիրառվում են ներմուծման լիցենզավորման գործելակարգերի կիրարկման համար, որոնցով պահանջում է համապատասխան վարչական մարմնին դիմում կամ այլ փաստաթղթեր (բացի նրանցից, որոնք պահանջվում են մաքսային նպատակներով) ներկայացնել՝ որպես նախապայման ներմուծող Անդամի մաքսային տարածք ներմուծում կատարելու համար:

2. Անդամներն ապահովում են, որ ներմուծման լիցենզավորման գործելակարգի իրականացման համար կիրառվող վարչական ընթացակարգերը համապատասխանեն ՄԱԳ-Հ-1994-ի, ներառյալ՝ դրա հավելվածների և արձանագրությունների համապատասխան դրույթներին, ինչպես դրանք մեկնաբանված են սույն Համաձայնագրով, նպատակ ունենալով կանխել առևտրի խաթարումները, որոնք կարող են ծագել այդ ընթացակարգերի անպատշաճ կիրարկման հետևանքով, հաշվի առնելով զարգացող Անդամ երկրների<sup>2</sup> տնտեսական զարգացման նպատակները, ֆինանսական և առևտրային կարիքները:

3. Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի կանոնները չեզոք են կիրառման մեջ և կիրարկվում են արդար և անաչառ ձևով:

4. ա) Դիմումի ներկայացման ընթացակարգերին վերաբերող կանոնները և բոլոր տեղեկությունները, ներառյալ՝ այդպիսի դիմումներ ներկայացնելու համար անձերի, ընկերությունների և հաստատությունների իրավունակությունը, վարչական մարմինը(ները), որոնց պետք է դիմել, և լիցենզավորման ենթակա արտադրանքների ցանկերը հրապարակվում են այն աղբյուրներում, որոնց մասին ծանուցվել է 4-րդ Հոդվածով նախատեսված Ներմուծման լիցենզավորման հարցերով հանձնախմբին (սույն Համաձայնագրում հիշատակվում է որպես «Հանձնախումբ») այնպես, որ կառավարությունները<sup>3</sup> և առևտրականները հնարավորություն

<sup>1</sup> Որպես «լիցենզավորում» հիշատակվող ընթացակարգերը, ինչպես նաև համանման վարչական այլ ընթացակարգերը:

<sup>2</sup> Սույն Համաձայնագրի մեջ ոչնչից չի բխում, որ լիցենզավորման ընթացակարգով իրականացվող միջոցի հիմքերը, շրջանակներն ու տևողությունը հարցադրման ենթակա են սույն Համաձայնագրի շրջանակներում:

<sup>3</sup> Սույն Համաձայնագրի նպատակով, համարվում է, որ «կառավարություններ» հասկացությունը ներառում է Եվրոպական

ունենան ծանոթանալու դրանց: Հնարարավորության դեպքում այդ հրապարակումը կատարվում է պահանջի ուժի մեջ մտնելու օրվանից 21 օր առաջ և համենայն դեպս այդ՝ ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ: Լիցենզավորման ընթացակարգերի կանոնների կամ լիցենզավորման ենթակա արտադրանքների ցանկի մեջ կամ դրանցից կատարվող ցանկացած բացառություն, շեղում կամ փոփոխություն նույնպես հրապարակվում են վերևում հատկորոշված նույն եղանակով ու ժամկետներում: Այդ հրապարակումների պատճենները մատչելի են դարձվում Քարտուղարությանը:

բ) Պահանջ ներկայացվելու դեպքում, այն Անդամներին, որոնք ցանկանում են գրավոր դիտողություններ անել, հնարավորություն է տրվում քննարկել այդ դիտողությունները: Գործին առնչվող Անդամը պատշաճ ձևով հաշվի է առնում այդ դիտողություններն ու քննարկման արդյունքները:

5. Դիմումի ձևերը և, կիրառելիության դեպքում, նորացման ձևերը պետք է լինեն հնարավորին չափ պարզ: Դիմումի համար կարող են պահանջվել այնպիսի փաստաթղթեր ու տեղեկություններ, որոնք համարվում են խիստ անհրաժեշտ լիցենզավորման գործելակարգի պատշաճ գործառության համար:

6. Դիմելու ընթացակարգերը և, կիրառելիության դեպքում, նորացման ընթացակարգերը պետք է լինեն հնարավորին չափ պարզ: Դիմողներին պատշաճ ժամանակ է տրվում լիցենզավորման դիմումների ներկայացման համար: Եթե սահմանված է վերջնաժամկետ, ապա այդ ժամկետը պետք է կազմի առնվազն 21 օր, որը հնարավոր է երկարաձգել այն պարագաներում, երբ այդ ժամկետի ընթացքում ստացվում են ոչ բավարար չափի դիմումներ: Դիմումի համար դիմորդները պետք է դիմեն միայն մեկ վարչական մարմնի: Եթե մեկից ավելի վարչական մարմինների դիմելու խիստ անհրաժեշտության կա, ապա դիմողներին անհրաժեշտ չէ դիմել երեքից ավելի վարչական մարմինների:

7. Դիմումը չի մերժվում փաստաթղթերում եղած աննշան սխալների պատճառով, որոնք չեն փոխում դրանցում պարունակող հիմնական տվյալները: Փաստաթղթերում կամ ընթացակարգերում արված որևէ բացթողման կամ սխալի համար, եթե դա արվել է ակնհայտորեն առանց կեղծելու մտադրության կամ բացահայտ անփութության, կիրառվող տուգանքի չափը չպետք է ավելի լինի, քան անհրաժեշտ է գուտ նախագուշացման համար:

8. Լիցենզավորված ներմուծումը չի մերժվում լիցենզիայում հատկանշված չափերից՝ արժեքի, քանակի կամ քաշի աննշան շեղումների պատճառով, որոնք տեղի են ունեցել առաքման ընթացքում առաջացող տարբերությունների, մեծաքանակ բեռնումներին բնորոշ տարբերությունների և սովորական առևտրային գործելակերպի հետ համատեղելի աննշան տարբերությունների պատճառով:

9. Լիցենզավորված ներմուծումների դիմաց վճարելու համար անհրաժեշտ արտարժույթը լիցենզիայի տիրոջ համար մատչելի է նույն այն հիմունքներով, որոնք սահմանված են ներմուծման լիցենզիաներ չպահանջվող արտադրանքներ ներմուծողների համար:

10. Անվտանգության նպատակով բացառությունների նկատմամբ կիրառվում են ՄԱԳ-Հ-1994-ի XXI Հոդվածի դրույթները:

11. Սույն Համաձայնագրի դրույթներով որևէ Անդամից չի պահանջվում բացահայտել գաղտնի տեղեկություններ, որոնց բացահայտումը կխոչնդոտեր օրենքի կիրարկմանը կամ այլ կերպ կհակասեր հասարակական շահերին կամ կվնասեր առանձին ընկերությունների՝ պետական թե մասնավոր, օրինական առևտրային շահերը:

## Հոդված 2. Ներմուծման ինքնաշխատ լիցենզավորում<sup>4</sup>

1. Ներմուծման ինքնաշխատ լիցենզավորումը սահմանվում է որպես ներմուծման լիցենզավորում, որի ժամանակ դիմումները բավարարվում են բոլոր դեպքերում, և որը համապատասխանում է 2«ա» կետի պահանջներին:

2. Ինքնաշխատ լիցենզավորման ընթացակարգերի նկատմամբ, ի լրումն, 1-ին Հոդվածի 1-11-րդ կետերի և սույն Հոդվածի 1-ին կետի դրույթների, կիրառվում են հետևյալ դրույթները<sup>5</sup>.

ա) ինքնաշխատ լիցենզավորման ընթացակարգերն իրականացվում են այնպես, որ ինքնաշխատ լիցենզավորման ենթակա ներմուծումների վրա սահմանափակող ազդեցություն չունենան: Համարվում է, որ ինքնաշխատ լիցենզավորման ընթացակարգերն առևտուրը սահմանափակող

---

համայնքների իրավասու մարմիններին:

<sup>4</sup> Անվտանգություն պահանջող՝ ներմուծման լիցենզավորման ընթացակարգերը, որոնք ներմուծումների վրա սահմանափակող ազդեցություն չունեն, պետք է համարվեն 1-ին և 2-րդ կետերի շրջանակների մեջ ընկնող:

<sup>5</sup> Այն զարգացող Անդամ երկիրը, որը 1979թ. ապրիլի 12-ին կնքված Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին համաձայնագրի կողմ զարգացող Անդամ երկիր չի եղել, և որը առանձնահատուկ դժվարություններ ունի կապված «ա»-«ii» և «ա»-«iii» ենթակետերի պահանջների կատարման հետ, կարող է Հանձնախմբին ծանուցելուց հետո այդ ենթակետերի կիրառումը հետաձգել այդ Անդամի համար ԱՀԿ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված ոչ ավելի, քան 2 տարով:

հետևանքներ չունեն, եթե այլոց թվում.

- (i) ցանկացած անձ, ընկերություն կամ հաստատություն, որը կատարում է ներմուծող Անդամի՝ ինքնաշխատ լիցենզավորման ենթակա արտադրանքներ ընդգրկող ներմուծման գործունեությամբ զբաղվելու համար եղած իրավական պահանջները, հավասարապես իրավունք ունի ներմուծման լիցենզիայի համար դիմելու և այն ստանալու.
  - (ii) լիցենզիա ստանալու համար դիմումները կարող են ներկայացվել ցանկացած աշխատանքային օր՝ մինչև ապրանքների մաքսագերծումը.
  - (iii) լիցենզիա ստանալու համար դիմումները, որոնք ներկայացվում են պատշաճ և ամբողջական ձևով, հաստատվում են անմիջապես ստանալուն պես, որքանով որ դա հնարավոր է վարչական առումով, բայց առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում.
- բ) Անդամներն ընդունում են, որ ներմուծման ինքնաշխատ լիցենզավորումը կարող է անհրաժեշտ լինել, եթե այլ համապատասխան ընթացակարգերը մատչելի չեն: Ներմուծման ինքնաշխատ լիցենզավորումը կարող է շարունակվել այնքան ժամանակ, քանի դեռ առկա են այն հանգամանքները, որոնցից ելնելով այն մտցվել է և քանի դեռ դրա հիմքում եղած վարչական նպատակներին ավելի նպատակահարմար եղանակով չի կարելի հասնել:

### Հոդված 3. Ներմուծման ոչ ինքնաշխատ լիցենզավորում

1. Ոչ ինքնաշխատ լիցենզավորման ընթացակարգերի նկատմամբ, ի լրումն 1-ին Հոդվածի 1-11-րդ կետերի դրույթների, կիրառվում են հետևյալ դրույթները: Ներմուծման ոչ ինքնաշխատ լիցենզավորման ընթացակարգերը սահմանվում են որպես ներմուծման լիցենզավորում, որը չի ընկնում 2-րդ Հոդվածի 1-ին կետում պարունակվող սահմանման տակ:

2. Ոչ ինքնաշխատ լիցենզավորումը ներմուծման վրա սահմանափակող կամ խաթարող ազդեցություն չի ունենում՝ ի հավելումն նրանց, որոնք առաջանում են սահմանափակման կիրառման հետևանքով: Ոչ ինքնաշխատ լիցենզավորման ընթացակարգերն իրենց շրջանակներով ու տևողությամբ համապատասխանում են այն միջոցին, որի իրականացման համար դրանք կիրառվում են, և վարչարարության առումով չպետք է ավելի բարդ լինեն, քան դա անպայմանորեն անհրաժեշտ է տվյալ միջոցի իրականացման համար:

3. Քանակական սահմանափակումների իրականացումից տարբեր նպատակներով դրվող լիցենզավորման պահանջների դեպքում Անդամները բավարար տեղեկություններ են հրապարակում, որպեսզի այլ Անդամները և առևտրականներն իմանան լիցենզիաների տրամադրման և(կամ) բաշխման հիմքերը:

4. Եթե Անդամը անձերին, ընկերություններին կամ կազմակերպություններին լիցենզավորման պահանջից բացառություն կամ շեղում պահանջելու հնարավորություն է տրամադրում, ապա 1-ին Հոդվածի 4-րդ կետի համաձայն հրապարակվող տեղեկությունների մեջ ներառում է այդ փաստը, ինչպես նաև տեղեկություն, թե ինչպես դիմել այդպիսի պահանջով, և հնարավորության սահմաններում մատնանշում այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում պահանջները կդիտարկվեն:

5. ա) Տվյալ արտադրանքի առևտրով շահագրգռված ցանկացած Անդամի պահանջով Անդամները տրամադրում են գործին առնչվող բոլոր տեղեկությունները հետևյալի վերաբերյալ՝

- i) սահմանափակումների վարչարարության,
- ii) վերջին ժամանակաշրջանում տրամադրված ներմուծման լիցենզիաների,
- iii) մատակարարող երկրների միջև այդպիսի լիցենզիաների բաշխման,
- iv) հնարավորության դեպքում՝ ներմուծման լիցենզավորման ենթակա արտադրանքների վերաբերյալ վիճակագրության (այսինքն՝ արժեքի և(կամ) ծավալի): Ջարգացող Անդամ երկրներից չի ակնկալվի լրացուցիչ վարչական կամ ֆինանսական դժվարություններ կրել այս կապակցությամբ.

բ) լիցենզավորման միջոցով քվոտաներ կիրարկող Անդամները՝ կիրառվելիք քվոտաների ընդհանուր ծավալը՝ ըստ քանակի և(կամ) արժեքի, քվոտայի սկզբնաժամկետն ու վերջնաժամկետը, և դրանց ցանկացած փոփոխությունը հրապարակում են 1-ին Հոդվածի 4-րդ կետում հատկորոշված ժամկետներում և այնպես, որ կառավարությունները և առևտրականները կարողանան ծանոթանալ դրանց հետ.

գ) սահմանափակումներ կիրառող Անդամները, մատակարարող երկրների միջև քվոտաների բաշխման դեպքում տվյալ արտադրանքի մատակարարմամբ շահագրգռված բոլոր մյուս Անդամներին շտապ կարգով տեղեկացնում են տարբեր մատակարարող երկրների միջև

ներկայումս բաշխված քվոտայի չափաբաժինների մասին՝ ըստ քանակի կամ արժեքի, և այդ տեղեկությունները հրապարակում են 1-ին Հոդվածի 4-րդ կետում հատկորոշված ժամկետներում և այնպես, որ կառավարությունները և առևտրականները կարողանան ծանոթանալ դրանց հետ.

- դ) եթե ստեղծվում են իրավիճակներ, երբ անհրաժեշտ է դառնում քվոտայի վաղ սկզբնաժամկետ նախատեսել, ապա 1-ին Հոդվածի 4-րդ կետում հիշատակված տեղեկությունները պետք է հրապարակվեն 1-ին Հոդվածի 4-րդ կետում հատկորոշված ժամկետներում և այնպես, որ կառավարությունները և առևտրականները կարողանան ծանոթանալ դրանց հետ.
- ե) ցանկացած անձ, ընկերություն կամ հաստատություն, որը կատարում է ներմուծող Անդամի իրավական ու վարչական պահանջները, հավասարապես իրավունք ունի ներմուծման լիցենզիա ստանալու համար դիմելու և դիտարկվելու: Եթե լիցենզիայի դիմումը չի հաստատվում, ապա դիմողը պահանջելու դեպքում տեղեկացվում է դրա պատճառների մասին և բողոքարկման կամ վերաքննության իրավունք ունի համաձայն ներմուծող Անդամի ներքին օրենսդրության և ընթացակարգերի.
- զ) բացառությամբ Անդամների հսկողությունից դուրս եղած պատճառներով անհնարին լինելու դեպքերի, դիմումների քննարկման ժամկետը չի գերազանցում 30 օրը, եթե դիմումները քննարկվում են ստացման պահից սկսած և ստանալուն պես, այսինքն՝ «առաջինը եկավ, առաջինը սպասարկվեց» հիմունքով, և 60 օրը, եթե բոլոր դիմումները քննարկվում են միաժամանակ: Վերջին դեպքում համարվում է, որ դիմումների քննարկման ժամկետն սկսվում է դիմումների ներկայացման հայտարարված վերջնաժամկետին հաջորդող օրը.
- է) լիցենզիայի գործողության ժամկետը խելամիտ տևողություն ունի, բայց այնքան կարճ չէ, որ կանխի ներմուծումը: Լիցենզիայի գործողության ժամկետը չի կանխում հեռավոր աղբյուրներից ներմուծումը, բացառությամբ այն հատուկ դեպքերի, երբ ներմուծումներն անհրաժեշտ են չնախատեսված կարճաժամկետ կարիքներ բավարարելու համար.
- ը) քվոտաների կիրարկման դեպքում Անդամները չեն խոչընդոտում, որ ներմուծումը տեղի ունենա համաձայն տրամադրված լիցենզիաների, և չեն խոչընդոտում քվոտայի ամբողջական օգտագործմանը.
- թ) լիցենզիա տրամադրելիս Անդամները հաշվի են առնում, որ ցանկալի է արտադրանքների համար լիցենզիաներ տրամադրել տնտեսապես հիմնավորված քանակներով.
- ժ) լիցենզիաների բաշխման ընթացքում Անդամը պետք է հաշվի առնի դիմողի՝ ներմուծման կատարողականությունը: Այդ առընչությամբ պետք է հաշվի առնել՝ արդյոք դիմողներին նախկինում տրամադրված լիցենզիաները ամբողջապես օգտագործվել են վերջին հատկանշական ժամանակահատվածում: Այն դեպքերում, երբ լիցենզիաներն ամբողջապես չեն օգտագործվել, Անդամը քննության է առնում դրա պատճառները և հաշվի է առնում այդ պատճառները նոր լիցենզիաների բաշխման ընթացքում: Ուշադրություն է դարձվում նաև նոր ներմուծողներին լիցենզիաների խելամիտ բաշխման ապահովման վրա՝ հաշվի առնելով, որ ցանկալի է արտադրանքների համար լիցենզիաներ տրամադրել տնտեսապես հիմնավորված քանակներով: Այդ առումով, հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն ներմուծողներին, որոնք ներմուծում են զարգացող Անդամ երկրներում և հատկապես առավել թույլ զարգացած Անդամ երկրներում ծագած արտադրանքներ.
- ժա) եթե լիցենզիաների միջոցով կիրարկվող քվոտաները չեն բաշխվում մատակարարող երկրների միջև, ապա լիցենզիա ունեցողներն<sup>6</sup> ազատ են ներմուծումների աղբյուրների ընտրության հարցում: Մատակարարող երկրների միջև քվոտաների բաշխման դեպքում, լիցենզիայում որոշակիորեն պետք է նշվի երկիրը կամ երկրները.
- ժբ) 1-ին Հոդվածի 8-րդ կետը կիրառելիս կարող են փոխհատուցող շտկումներ արվել լիցենզիայի ապագա բաշխման ժամանակ, երբ ներմուծումները գերազանցել են նախորդ լիցենզիայի մակարդակը:

#### Հոդված 4. Հաստատություններ

Սույնով ստեղծվում է Ներմուծման լիցենզավորման հարցերով հանձնախումբ, որը կազմված է Անդամներից յուրաքանչյուրի ներկայացուցիչներից: Հանձնախումբն ընտրում է իր Նախագահին և Փոխնախագահին և ժողովներ է գումարում ըստ անհրաժեշտության՝ նպատակ ունենալով Անդամներից հնարավորություն տալ խորհրդակցելու սույն Համաձայնագրի գործողության կամ դրա նպատակների

<sup>6</sup> Որոշ դեպքերում հիշատակվում են որպես «քվոտա ունեցողներ»:

իրականացմանը նպաստելու հետ կապված ցանկացած հարցի շուրջ:

## Հոդված 5. Ծանուցում

1. Լիցենզավորման ընթացակարգեր կամ այդ ընթացակարգերում փոփոխություններ սահմանող Անդամներն այդ մասին Հանձնախմբին ծանուցում են հրապարակումից հետո՝ 60 օրվա ընթացքում:

2. Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի սահմանման մասին ծանուցումները պարունակում են հետևյալ տեղեկությունները.

ա) լիցենզավորման ընթացակարգերի ենթակա արտադրանքների ցանկը.

բ) իրավունակության վերաբերյալ տեղեկություն ստանալու համար հաղորդակցման կետը.

գ) դիմում ներկայացնելու վարչական մարմինը(ները).

դ) այն հրապարակման ամսաթիվը և անվանումը, որում հրապարակվել են լիցենզավորման ընթացակարգերը.

ե) նշում այն մասին, թե արդյոք լիցենզավորման ընթացակարգն ինքնաշխատ է, թե ոչ ինքնաշխատ՝ համաձայն 2-րդ և 3-րդ Հոդվածներում պարունակվող սահմանումների.

զ) ներմուծման ինքնաշխատ լիցենզավորման ընթացակարգերի դեպքում, դրանց վարչական նպատակները.

է) ներմուծման ոչ ինքնաշխատ լիցենզավորման ընթացակարգերի դեպքում՝ լիցենզավորման ընթացակարգերի միջոցով իրականացվող միջոցի ցուցանումը, և՝

ը) լիցենզավորման ընթացակարգերի ակնկալվող տևողությունը, եթե դա կարելի է գնահատել որոշակի հավանականությամբ, իսկ եթե ոչ, ապա պատճառը, թե ինչու այդ տեղեկությունը հնարավոր չէ տրամադրել:

3. Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերում արված փոփոխությունների վերաբերյալ ծանուցումներում ցուցանվում են վերոհիշյալ տարրերը, եթե դրանցում փոփոխություններ են արվում:

4. Անդամները Հանձնախմբին ծանուցում են այն հրապարակման(ումների) մասին, որտեղ կհրապարակվեն 1-ին Հոդվածի 4-րդ կետով պահանջվող տեղեկությունները:

5. Ցանկացած շահագրգիռ Անդամ, որը համարում է, որ մեկ այլ Անդամ՝ լիցենզավորման ընթացակարգի սահմանման կամ դրանում արված փոփոխությունների մասին չի ծանուցել համաձայն 1-3-րդ կետերի դրույթների, կարող է այդ հարցը ներկայացնել այդ այլ Անդամի ուշադրությանը: Եթե դրանից հետո ծանուցումը շտապ կարգով չի կատարվում, ապա այդ Անդամը կարող է ինքը ծանուցել լիցենզավորման ընթացակարգի կամ դրանում արված փոփոխությունների մասին, ներառյալ՝ բոլոր գործին առնչվող ու մատչելի տեղեկությունները:

## Հոդված 6. Խոհրդակցություններ և վեճերի կարգավորում

Վեճերի կարգավորման փոխհամաձայնությամբ մշակված ու ըստ դրա կիրառվող՝ ՍԱԳ-Հ-1994-ի XXII և XXIII Հոդվածների դրույթները տարածվում են սույն Համաձայնագրի գործողության վրա ազդող ցանկացած հարցի շուրջ անցկացվող խորհրդակցությունների և վեճերի կարգավորման վրա:

## Հոդված 7. Վերաքննություն

1. Հանձնախումբը վերաքննում է սույն Համաձայնագրի իրականացումն ու գործողությունը՝ հաշվի առնելով դրա նպատակները, և դրանում ընդգրկված իրավունքներն և պարտավորությունները՝ ըստ անհրաժեշտության, բայց առնվազն 2 տարին մեկ:

2. Քարտուղարությունը Հանձնախմբի վերաքննության համար որպես հիմք նախապատրաստում է փաստական զեկուցագիր՝ հիմնվելով 5-րդ Հոդվածի համաձայն տրամադրված տեղեկությունների, ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին տարեկան հարցաշարերի<sup>7</sup> պատասխանների և իրեն մատչելի այլ համապատասխան վստահելի տեղեկությունների վրա: Այդ զեկուցագրով տրվում է վերոհիշյալ տեղեկությունների համառոտագիր՝ մասնավորապես մատնանշելով հաշվետու ժամանակամիջոցում կատարված ցանկացած փոփոխություն կամ զարգացում և ներառելով Հանձնախմբի հետ համաձայնեցված ցանկացած այլ տեղեկություն:

3. Անդամները հանձն են առնում ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին տարեկան հարցաշարը լրացնել շտապ և լիարժեքորեն:

4. Հանձնախումբն Ապրանքների առևտրի խորհրդին տեղեկացնում է այդ վերաքննություններով

<sup>7</sup> Սկզբնապես շրջաբերվել է որպես ՍԱԳ-Հ-1947-ի՝ 1971թ. մարտի 23-ի L/3515 փաստաթուղթ:

ընդգրկված ժամանակահատվածների ընթացքում եղած զարգացումների մասին:

## Հոդված 8. Եզրափակիչ դրույթներ

### Վերապահումներ

1. Սույն Համաձայնագրի որևէ դրույթի առնչությամբ վերապահումներ չեն կատարվում առանց մյուս Անդամների համաձայնության:

### Ներքին օրենսդրություն

2. ա) Յուրանքանչյուր Անդամ ապահովում է իր օրենքների, կանոնակարգերի և վարչական ընթացակարգերի համապատասխանությունը սույն Համաձայնագրի դրույթներին ոչ ուշ, քան իր համար ԱՀԿ համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու օրը:
- բ) Յուրանքանչյուր Անդամ Հանձնախմբին տեղեկացնում է սույն Համաձայնագրին վերաբերող իր օրենքներում և կանոնակարգերում և այդ օրենքների և կանոնակարգերի կիրարկման մեջ կատարված ցանկացած փոփոխության մասին: